

Սոցիալական ձեռնարկատիրության հիմնարար արժեքներն անհատի մակարդակում ու պահանջվող որակները

Փորձելք դիտարկել սոցիալական ձեռներեցի համար անհրաժեշտ անհատական որակներն ու արժեքները վերոհիշյալ “բանալիներով”:

I. Մոտիվացիա

Սոցիալական ձեռնարկատիրության սահմանումները բազմաթիվ են, և ըստ այդմ բավականին զանազան կարող է լինել նաև մոտիվացիայի դիտարկումը: Այնուամենայնիվ, բոլոր հետազոտողները միակարծիք են մեկ բանում՝ սոցիալական ձեռներեցության արժեքային հենքն առաջին հերթին բարոյականությունն է:

Հեղինակներ Մեյր, Ռոբինսոն և Հոքերթսը սոցիալական ձեռնարկատիրության մոտիվացիան դիտարկում են անհատի անցած ուղու տեսանկյունից՝ համարելով, որ մոտիվացիան ձևավորվում է սոցիալական/քաղաքացիական գործընթացներին ներգրավվելու արդյունքում կուտակված փորձի և բարոյական հատկանիշների համատեղման հիման վրա:

II. Կարիքի ձևակերպում

Կարիքի ձևակերպումը սոցիալական ձեռներեցության պարագայում բաժանվում է հետևյալ երեք խմբերի՝

- անձի կողմից իր մոտիվացիայի գործածման հոգեբանական կարիքը,
- բիզնեսի համար առկա պահանջարկի վերհանումը,
- հստակ տեսլականը ծառայած սոցիալական խնդրի վերաբերյալ:

Վերջինը հիմնարարն է սոցիալական ձեռնարկատիրության համար և հնարավոր է կրկին միայն բարոյական որակների, հատկապես՝ Էմպատիայի (ապրումակցման) առկայության դեպքում:

III. Նպատակադրում

Ի տարբերություն սովորական ձեռներեցության, սոցիալական ձեռնարկատիրության հիմնական նպատակը սոցիալական որևէ հստակ փոփոխության իրագործումն է: Նպատակադրման ժամանակ անձը պետք է շեշտը դնի նախ և առաջ բուն սոցիալական ազդեցության նպատակի վրա. իր համար այն պետք է արժևորվի որպես առաքելություն, և գաղափարի հանդեպ նվիրվածությունը սոցիալական ձեռներեցի հիմնարար որակն է: Յուրաքանչյուր ոլորտ նպատակի իրագործման համար պահանջում է նվիրվածություն, անգամ կիրք, սակայն, ինչպես բացատրում է Լայոնսը, սոցիալական ձեռներեցները մյուս բոլորից տարբերվում են կրքի մակարդակով, որը գեներացվում է բարոյականության վրա հիմնված արժեքներով:

Պետք է հաշվի առնել նաև, որ ինչպես սովորական բիզնեսի, այնպես էլ սոցիալական ձեռնարկատիրության մեջ առավել հաջողակները նրանք են, ովքեր ձգտում են և հակված են երկարաժամկետ նպատակների իրագործմանը:

IV. Սեփական ունակությունների և կարողությունների գնահատում

Բորնշտեյնը, հիշատակելով սոցիալական ձեռներեցությամբ զբաղվող մի շարք միջազգային կազմակերպություններ, առանձնացնում է սոցիալական ձեռներեցության համար անհրաժեշտ հետևյալ տարրերը.

